ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվարի 2025 թվականի N 1-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականկի հունվարի 16-ի թիվ 1 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N 104-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում քաղաքացի Անդրանիկ Էդարդի Բեգոյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված բնակելի տուն և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը ուղղակի կարգով կառուցապատողին վաճառելու համար համաձայնություն տալու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (8) **Դեմ՝ (0)** **Ձեռնպահ՝ (0)**

ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԿՅԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.

ՄԱՆՈՒԿՅԱՆ Կ.

ՄԵԼԻՔՅԱՆ

ՇԱԲՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«16» հունվարի 2025 թվական
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվարի 2025 թվականի N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 104-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 104-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) «Համայքի բյուջեի եկամուտները» հատված 1-ում՝

ա. Հոդված 7131, 1113 տողում «43706.5» թիվը փոխարինել «47206.5» թվով,

բ. Հոդված 7136, 1121 տողում «60403.0» թիվը փոխարինել «61770.0» թվով,

գ. Հոդված 7332, 1261 տողում «200000.0» թիվը փոխարինել «255000.0» թվով,

դ. Հոդված 7415, 1331 տողում «18000.0» թիվը փոխարինել «15000.0» թվով:

2) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման» հատված 2-ում՝

ա. Բաժին 1, խումբ 1, դաս 1, 2111 տողում «223400.0» թիվը փոխարինել «233104.3» թվով,

բ. Բաժին 1, խումբ 6, դաս 1, 2161 տողում «76100.0» թիվը փոխարինել «116100.0» թվով,

գ. Բաժին 4, խումբ 2, դաս 4, 2424 տողում «35000.0» թիվը փոխարինել «110000.0» թվով,

դ. Բաժին 4, խումբ 3, դաս 2, 2432 տողում «46000.0» թիվը փոխարինել «119000.0» թվով,

ե. Բաժին 4, խումբ 5, դաս 1, 2451 տողում «48500.0» թիվը փոխարինել «211000.0» թվով,

զ. Բաժին 6, խումբ 3, դաս 1, 2631 տողում «35500.0» թիվը փոխարինել «50500.0» թվով,
է. Բաժին 6, խումբ 4, դաս 1, 2641 տողում «36000.0» թիվը փոխարինել «55000.0» թվով,
ը. Բաժին 6, խումբ 6, դաս 1, 2661 տողում «85000.0» թիվը փոխարինել «104500.0» թվով,
թ. Բաժին 8, խումբ 1, դաս 1, 2811 տողում «11200.0» թիվը փոխարինել «15000.0» թվով,
ժ. Բաժին 8, խումբ 2, դաս 4, 2824 տողում «7000.0» թիվը փոխարինել «8367.0» թվով,
ի. Բաժին 9, խումբ 2, դաս 1, 2921 տողում «400.0» թիվը փոխարինել «900.0» թվով:

3) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման» հատված 3-ում՝
ա. Հոդված 4111, 4111 տողում «224227.2» թիվը փոխարինել «229227.2» թվով,
բ. Հոդված 4212, 4212 տողում «30000.0» թիվը փոխարինել «31704.3» թվով,
գ. Հոդված 4221, 4221 տողում «1500.0» թիվը փոխարինել «2200.0» թվով,
դ. Հոդված 4239, 4238 տողում «16900.0» թիվը փոխարինել «17567.0» թվով,
ե. Հոդված 4637, 4531 տողում «5000.0» թիվը փոխարինել «5500.0» թվով,
զ. Հոդված 5112, 5112 տողում «120000.0» թիվը փոխարինել «269000.0» թվով,
է. Հոդված 5113, 5113 տողում «80000.0» թիվը փոխարինել «255000.0» թվով,
ը. Հոդված 5121, 5121 տողում լրացնել «18500.0» թիվ,
թ. Հոդված 5122, 5122 տողում լրացնել «3000.0» թիվ,
ժ. Հոդված 5129, 5123 տողում լրացնել «3300.0» թիվ,
ի. Հոդված 5134, 5134 տողում «15000.0» թիվը փոխարինել «72500.0» թվով,
լ. Հոդված 5511, 5511 տողում լրացնել «4500.0» թիվ:

4) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/ հատված 4-ում՝
ա. 7000 տողում լրացնել «362504.2» թիվ:

5) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները» հատված 5-ում՝
ա. 8192 տողում լրացնել «6704.2» թիվ,
բ. 8193 տողում լրացնել «280489.7» թիվ
գ. 8198 տողում լրացնել «75310.3» թիվ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (8)	**Դեմ՝ (0)**	**Ձեռնպահ՝ (0)**
ԴԱՆԻԵԼՅԱՆ		
ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		
ՀԱՅԿՅԱՆ		
ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.		
ՄԱՆՈՒԿՅԱՆ Կ.		

ՄԵԼԻՔՅԱՆ

ՇԱԲՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«16» հունվարի 2025 թվական
գյուղ Աշոցք

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի *Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 16-ի N 2-Ն որոշման*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի **N 104-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտությունն առաջացել է** բյուջեով նախատեսված եկամուտների ավելացման, ինչպես նաև պակասեցման և տարեսկզբի ազատ մնացորդի ֆինանսավորման և չնախատեսված ելքերի ֆինանսավորման համար:

Կատարված վերլուծության արդյունքում համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի պլանը ավելացվել է 3500.0 հազ.դրամով, փոխադրամիջոցների գույքահարկի պլանը ավելացվել է 1367.0 հազ դրամով՝ հիմք ընդունելով <<Vxsoft>> ծրագրում կատարված ճշտումները՝ 2025 թվականի հունվարի 8–ի դրությամբ:

Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը 287193.9 հազ. դրամ է, որից 6704.2 հազ.դրամը ուղղվել է նախորդ տարվա համայնքի բյուջեի վարչական մասի ծախսերի ծածկմանը, իսկ 280489.7 հազ.դրամը ֆոնդային բյուջեի ծախսերի ծածկմանը, իսկ ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդը 75310.3 հազ. դրամ է:

Տարեսկզբի մնացորդները ընդամենը 362504.2 հազ. դրամ է, որից 6704.2 հազ.դրամը պլանավորվել է ուղղել վարչական բյուջեի նախորդ տարում չֆինանսավորված ծախսերի ծածկմանը, իսկ 354300.1 հազ.դրամը պլանավորվել է ուղղել սուբվենցիոն ծրագրերի համայնքի բաժնեմասի ծախսերի ծածկմանը:

Վերոգրյալից ելնելով բյուջեի գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածներում պետք է կատարել հետևյալ փոփոխությունները՝

Բաժին 01, խումբ 1, դաս 1 «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրում նախատեսված <<223400.0>> թիվը անհաժեշտ է փոխարինել <<229227.2>> թվով, ավելացնելով՝ վարչական բյուջեի 4111 հոդվածին 5000.0 հազ.դրամ, 4212 հոդվածին՝ 1704.3 հազ.դրամ և ֆոնդային բյուջեի 5122 հոդվածին՝ 3000.0 հազ.դրամ /վարչական սարքավորումներ ձեռք բերելու նպատակով/:

Բաժին 01, խումբ 6, դաս 1 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրում նախատեսված <<76100.0>> թիվը անհաժեշտ է փոխարինել «116100.0» թվով ավելացնելով՝ ֆոնդային բյուջե 40000.0 հազ.դրամ, որից 5113 հոդվածին 30000.0 հազար դրամ, 5129 հոդվածին 2000.0 հազ.դրամ (տեսախցիկի ձեռք բերում), 5134 հոդվածին 6000.0 հազ.դրամ սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով և 5511 հոդվածին 2000.0 հազ.դրամ՝ համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի համար:

Բաժին 4, խումբ 2, դաս 4 «Ոռոգում» ծրագրում նախատեսված «35000.0» թիվը անհաժեշտ է փոխարինել «110000.0» թվով ավելացնելով՝ ֆոնդային բյուջե 75000.0 հազ. դրամ ,որից 5112 հոդվածին 65000.0 հազար դրամ և 5134 հոդվածին 10000.0 հազ.դրամ սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով :

Բաժին 4, խումբ 3, դաս 2 «Նավթամթերք և բնական գազ» ծրագրում նախատեսված «46000.0» թիվը անհաժեշտ է փոխարինել «119000.0» թվով ավելացնելով՝ ֆոնդային բյուջե 73000.0 հազ. դրամ, որից 5112 հոդվածին 60000.0 հազար դրամ և 5134 հոդվածին 13000.0 հազ.դրամ սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով:

Բաժին 4, խումբ 5, դաս 1 «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրում նախատեսված «48500.0» թիվը անհաժեշտ է փոխարինել փոխարինել «211000.0» թվով ավելացնելով՝ ֆոնդային բյուջե 162500.0 հազ. դրամ ,որից 5113 հոդվածին 130000.0 հազար դրամ, 5134 հոդվածին 14000.0 հազ.դրամ և 5121 հոդվածին 18500.0 հազ.դրամ (տեխնիկայի ձեռք բերում) սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով:

Բաժին 6, խումբ 3, դաս 1, «Ջրամատակարարում» ծրագրում նախատեսված «35500.0» թիվը անհրաժեշտ է փոխարինել «50500.0» թվով ավելացնելով՝ ֆոնդային բյուջե 15000.0 հազ. դրամ ,որից 5112 հոդվածին 10000.0 հազար դրամ և 5134 հոդվածին 5000.0 հազ.դրամ սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով :

Բաժին 6, խումբ 4, դաս 1 «Փողոցների լուսավորում» ծրագրում նախատեսված «36000.0» թիվը անհրաժեշտ է փոխարինել «55000.0» թվով ավելացնելով՝ ֆոնդային բյուջե 19000.0 հազ. դրամ, որից 5112 հոդվածին 14000.0 հազար դրամ և 5134 հոդվածին 5000.0 հազ.դրամ սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով :

Բաժին 6, խումբ 6, դաս 1 «Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ» ծրագրում նախատեսված «85000.0» թիվը անհրաժեշտ է փոխարինել «104500.0» թվով ավելացնելով՝ ֆոնդային բյուջե 19500.0 հազ. դրամ, որից 5113 հոդվածին 15000.0 հազար դրամ և 5134 հոդվածին 4500.0 հազ.դրամ սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով :

Բաժին 8, խումբ 1, դաս 1, «Հանգիստ և սպորտի ծառայություններ» ծրագրում նախատեսված «11200.0» թիվը անհրաժեշտ է փոխարինել «15000.0» թվով ավելացնելով՝ վարչական բյուջեի 4221 հոդվածին 700.0 հազ. դրամ /գործուղման ծախս Համահայկական խաղեր/ և ֆոնդային բյուջե 5129 հոդվածին 600.0 հազ. դրամ (սպորտային գույք) ձեռք բերման նպատակով և 5511 հոդվածին 2500.0 հազ.դրամ՝ համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի համար:

Բաժին 8, խումբ 2, դաս 4, «Այլ մշակութային կազմակերպություններ» ծրագրում նախատեսված «7000.0» թիվը անհրաժեշտ է փոխարինել «8367.0» թվով ավելացնելով՝վարչական բյուջեի 4239 հոդվածին 667.0 հազ.դրամ և ֆոնդային բյուջե 5129 հոդվածին 700.0 հազ. դրամ /<<Աշոցքի Ձմեռ>> միջոցառմանը տաղավարներ ձեռք բերման նպատակով/ :

Բաժին 9, խումբ 2, դաս 1, «Հիմնական ընդհանուր կրթություն» ծրագրում նախատեսված «400.0» թիվը անհրաժեշտ է փոխարինել «900.0» թվով ավելացնելով՝ վարչական բյուջեի 4637 հոդվածին 500.0 հազ.դրամ՝ ընթացիկ դրամաշնորհներ դպրոցներին (աշակերտների տեղափոխման նպատակով):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվարի 2025 թվականի N 3-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԷԴԱՐԴԻ ԲԵԳՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի՝ Անդրանիկ Էդվարդի Բեգոյանը, իր 2025 թվականի հունարի 08-ի դիմումի համաձայն, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-015-0062-0011 կադաստրային ծածկագրով 0.01576 հեկտար հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տան և համապատասխան հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-015-0062-0011 կադաստրային ծածկագրով 0.01576 հեկտար հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **54.52** քառակուսի մետր ներքին և **83.98** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը (անշարժ գույքի

հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, 3-րդ փողոց, բնակելի տուն 31, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24122024-08-0007) ուղղակի կարգով ***157420 (մեկ հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր քսան)*** **Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով,** ինքնակամ շինությունն իրականացրած ֆիզիկական անձ, քաղաքացի՝ Անդրանիկ Էդվարդի Բեգոյանին (հետագայում քաղաքացի) (նունականացման քարտ՝ 003507829, տրված՝ 18.02.2015թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 3-րդ փողոց, բնակելի տուն 31) վաճառելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (8)	**Դեմ՝ (0)**	**Ձեռնպահ՝ (0)**
ԴԱՆԻԵԼՅԱՆ		
ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		
ՀԱՅԿՅԱՆ		
ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.		
ՄԱՆՈՒԿՅԱՆ Կ.		
ՄԵԼԻՔՅԱՆ		
ՇԱԲՈՅԱՆ		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«16» հունվարի 2025 թվական
գյուղ Աշոցք